ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2016 թվականի N 83-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2016թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ը <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ և ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 20.03.2012թ.N 194-Ն, ՀՀ պաշտպանության նախարարի 11.04.2012թ.N323, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 26.23.2012թ.N32-Ն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 21.03.2012թ. N1-Ն ՀՀ ոստիկանապետի 24.03.2012թ. N5-Ն և ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի 04.04.2012թ. N1-Ն համատեղ հրամաններով հաստատված կարգի, որոշում եմ.

1. 2016թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 30-ը մարզի հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անցկացնել <<Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթի մարզային փուլ:
2. Հաստատել մարզային մրցութային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ.սեպտեմբերի 29
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2016
թվականի սեպտեմբերի 29-ի
N 83-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
<<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>>
ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Ալեքսանյան Հովիկ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ/նախագահ/
2.Այվազյան Վովա	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
3.Դադոյան Սմբատ	Կապանի զինկոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ/համաձայնությամբ/
4.Սահակյան Սուրեն	ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ/համաձայնությամբ/
5.Քարամյան Հայկ	ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության աշխատակից/համաձայությամբ/
6.Գրիգորյան Գոռ	Կապանում տեղակայված N զորամասի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ/համաձայությամբ/
7.Պողոսյան Մարատ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ/համաձայնությամբ/

Աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան